



**ՀԱՉԱՐԱՄՅԱԿԻ  
ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ  
ՀԻՄՆԱԳՐԱՄ-ՀԱՅԱՍՏԱՆ**

*Մամյո հաղորդագրություն*

*30 ապրիլի, 2009թ.*

## **ՀՄՀ-Հայաստանը պայմանագրեր կնքեց բանկերի և վարկային կազմակերպությունների հետ**

Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան ՊՈԱԿ-ի և Ամերիաբանկի, Արդշինինվեստբանկի, Կոնվերս բանկի, Հայբիզնեսբանկի, ինչպես նաև՝ «Անիվ», «Ֆարմ Կրեդիտ Արմենիա», «Նոր Հորիզոն», «Քարդ ագրո կրեդիտ», «ՍԵՖ ինթերնեյշնլ», «ՋիԷֆՍԻ» Ունիվերսալ վարկային կազմակերպությունների միջև պայմանագրեր կնքվեցին, համաձայն որոնց, նշված 10 ֆինանսական կազմակերպությունները պետք է իրականացնեն ՀՄՀ-Հայաստան ծրագրի վարկային բաղադրիչը և վարկեր տրամադրեն գյուղաբնակ շահառուներին՝ գյուղատնտեսական արտադրությունը ընդլայնելու և արդյունավետ տեխնոլոգիաներ կիրառելու նպատակով: Պայմանագիրը ստորագրեցին ՀՄՀ-Հայաստան ծրագրի Գլխավոր գործադիր տնօրենը և վերը թվարկված ֆինանսական կազմակերպությունների տնօրենները:

Վարկային բաղադրիչը ՀՄՀ-Հայաստան ծրագրի Ջրից դեպի շուկա գործողության մասն է, որի շրջանակներում գյուղացիական տնտեսություններին ցուցաբերվում է տեխնիկական օժանդակություն գիտելիքների և նոր տեխնոլոգիաների փոխանցման միջոցով, ինչպես նաև՝ ծրագրի շահառուներին վարկային միջոցների տրամադրմամբ և վարկային բաղադրիչի իրականացման համար ընտրված ֆինանսական հաստատություններին տեխնիկական աջակցության ցուցաբերման միջոցով:

Վարկերը տրամադրվում են միայն Երևանից դուրս բնակվող շահառուներին՝ գյուղատնտեսական արտադրության ամրապնդման, սարքավորումների արդիականացման, պտղատու ծառերի և խաղողի այգիների ընդլայնման, տնկիների ձեռքբերման, փոքր հողատերերին, գյուղատնտեսական և վերամշակող արդյունաբերության ապրանքների մարքեթինգին օժանդակելու նպատակով՝ սարքավորումների ձեռքբերման, հավաքագրման կենտրոնների, գյուղատնտեսական վերամշակման ձեռնարկությունների հիմնման և ընդլայնման նպատակներով: Վարկառուները պետք է լինեն ոռոգման համակարգում ներդրումներից օգտվող այն ֆերմերները, որոնք մասնակցել են Ջրից դեպի շուկա բաղադրիչի դասընթացներին, ընդգրկվել են Ջրից դեպի շուկա բաղադրիչի ցուցադրական տնտեսության գործնական դասընթացում և պատրաստվում են կիրառել ծրագրի օգնությամբ ստացված գիտելիքները:

Բանկերին և վարկային կազմակերպություններին տրամադրվող վարկային միջոցների ընդհանուր գումարը հինգ տարվա համար կազմում է 8.5 մլն ԱՄՆ դոլար, ժամկետայնություն՝ մինչև 7 տարի, մինչև 12 տոկոս տարեկան տոկոսադրույքով: Առաջին հատկացումը՝ 1.5 միլիոն ԱՄՆ դոլարի չափով, արդեն իսկ բաշխվել է գյուղաբնակ ֆերմերներին մինչև 2008թ-ի սեպտեմբերի 30-ը: Նախատեսվում է մինչև ընթացիկ տարվա սեպտեմբերը հատկացնել ևս 5.5 մլն դոլարի վարկ, և ևս 1.5 մլն՝ 2010 թվականին:

Վարկային բաղադրիչի և ՀՄՀ-Հայաստան ծրագրի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության համար խնդրում ենք այցելել

[www.mca.am](http://www.mca.am)

###

*Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ - Հայաստանը (ՀՄՀ-Հայաստան) պետական ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է ՀՀ կառավարության կողմից և պատասխանատու է Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի ու ՀՀ կառավարության միջև կնքված Համաձայնագրի թափանցիկ իրականացումը վերահսկելու համար:*